

**ՓՈՐՉԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ**

**«Քրեական վարույթներով իրավական օգնության մասին» օրենքի նախագծի
(փաստաթղթային կոդ՝ Կ-851-29.05.2024-ՊԻ-011/0) վերաբերյալ**

Կառավարության կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացված «Քրեական վարույթներով իրավական օգնության մասին» օրենքի նախագիծը (փաստաթղթային կոդ՝ Կ-851-29.05.2024-ՊԻ-011/0) (այսուհետ՝ Նախագիծ) մասնագիտական փորձաքննության է ենթարկվել Ազգային ժողովի աշխատակազմի փորձագիտական և վերլուծական վարչությունում:

Նախագիծը ենթարկվել է իրավական, ֆինանսատնտեսագիտական, սոցիալական փորձաքննության:

Ստորև ներկայացվում է մասնագիտական փորձաքննության եզրակացությունը, ինչպես նաև Նախագծին առնչվող այլ օրենքի կամ Ազգային ժողովի որոշման ընդունման անհրաժեշտության բացակայության մասին տեղեկանքը:

Իրավական փորձաքննության արդյունքները

Նախագծի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (այսուհետ՝ Սահմանադրություն) և օրենքների պահանջներին համապատասխանության տեսանկյունից նշեմք հետևյալը.

1. Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսվում է՝ «Սույն օրենքի կարգավորման շրջանակներում քրեական վարույթներով իրավական օգնությունն ընդգրկում է՝ (...) **իրավական օգնության մասին հարցումներ, այդ թվում՝ փաստաթղթեր և առարկաներ հանձնելու, տեղեկություններ փոխանակելու, անձանցից ցուցմունքներ կամ բացատրություններ վերցնելու, կալանավորված կամ այլ անձանց վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու, զննման, խուզարկության, իրեղեն կամ թվային ապացույցներ ձեռք բերելու և փոխանցելու, փորձաքննություններ իրականացնելու, որպես վկա, տուժող, գույքային պատասխանող, նրանց օրինական կամ լիազոր ներակայացուցիչ, փորձագետ Հայաստանի Հանրապետություն կանչելու և վարույթային գործողություններ կատարելու, ազատությունից զրկված անձանց որպես վկա կամ առերեսման մասնակից փոխանցելու, քրեական վարույթի համար անհրաժեշտ փաստաթղթեր, ինչպես նաև թվային տվյալներ, ձայնագրություններ, այդ թվում՝ բանկային, ֆինանսական, կորպորատիվ կամ գործարար փաստաթղթերի բնօրինակներ կամ հաստատված պատճենների տրամադրումը, գույքի արգելադրումը, բռնագրավված գույքի բաշխումը և այլն. (...)**»: Առաջարկում ենք սույն միտքը վերաձևակերպել, քանզի Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի տվյալ ձևակերպումից անհասկանալի է, թե իրավական օգնության մասին հարցումների հետ կապված ինչ գործողություններ են ակնկալվում դիտարկել որպես քրեական վարույթներով իրավական օգնության տեսակ՝ ի տարբերություն նույն հոդվածի նույն մասի 4-րդ կետի, որտեղ հստակեցված է, որ քրեական վարույթներով իրավական օգնությունը ընդգրկում է Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերով սահմանված այլ **հարցումներ ուղարկելը, ստանալը, դրանց ընթացքը լուծելը:**

2. Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսվում է՝ «Սույն օրենքի կարգավորման շրջանակներում քրեական վարույթներով իրավական օգնությունն ընդգրկում է՝ (...) **հանձնումը (էքստրադիցիա), այդ թվում՝ ժամանակավորապես հանձնումը (...)**»: Ցանկանում ենք նշել, որ ի տարբերություն Նախագծով կարգավորվող հարաբերությունների նկատմամբ կիրառելի 1998 թվականի հուլիսի 1-ի Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք) 493-րդ հոդվածի 2-րդ մասի, Նախագիծը չի նախատեսում ժամանակավոր հանձման ինստիտուտը: Ուստի առաջարկում ենք կա՛ն Նախագծով նախատեսել համապատասխան ընթացակարգերը, կա՛ն Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետից հանել «, այդ թվում՝ **ժամանակավորապես հանձնումը:**» արտահայտությունը:

3. «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Նորմատիվ իրավական ակտում միևնույն միտքն արտահայտելիս կիրառվում են միևնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները՝ որոշակի հերթականությամբ»:* Առաջարկում ենք հիշատակված պահանջը պահպանել նախագծում, քանզի «քրեական վարույթներով իրավական օգնություն» հասկացության բացահայտումից հետո, Նախագծի մի շարք հոդվածներում օգտագործվում է «իրավական օգնություն» արտահայտությունը՝ արտահայտելով միևնույն միտքը, ինչպիսիք են օրինակ Նախագծի 5-րդ հոդվածը, 19-րդ հոդվածը և այլն: Առաջարկում ենք Նախագծում նույն միտքն արտահայտելիս օգտագործել միևնույն բառակապակցությունը կամ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն առաջին իսկ կիրառումից հետո սահմանել այդ արտահայտության կիրառման կրճատ տարբերակ:

4. Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասում, 87-րդ հոդվածի 2-րդ մասում, 88-րդ հոդվածի 2-րդ մասում առաջարկում ենք պահպանել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» 18-րդ հոդվածի 3-րդ մասը առ այն՝ *«Օրենքի լրիվ անվանումը հիշատակելիս հետևյալ հաջորդականությամբ ներառվում են օրենքի վերնագիրը, օրենքի ընդունման տարին, ամիսը (տասներով), ամսաթիվը, հերթական համարը և «օրենք» բառը: Օրենքի կրճատ անվանումը հիշատակելիս դրանում նշվում է օրենքի վերնագիրը»:* և «Պրոպագիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը» վերնագիրը վերաձևակերպել «Պրոբացիայի մասին» օրենքը» տեսքով:

5. Նախագծի 6-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետի համաձայն՝ *«**պատժից պայմանական ազատելը**՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 84-86-րդ և 89-րդ հոդվածներով կամ այլ հիմքերով պատժից պայմանականորեն չկիրառելը կամ պատժից ազատելը կամ պատժի կատարումը հետաձգելը, որի արդյունքում անձի նկատմամբ սահմանվում է փորձաշրջան»:* Գտնում ենք, որ սույն կարգավորումը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքին համապատասխանեցման անհրաժեշտություն ունի, քանզի Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 89-րդ հոդվածով նախատեսվում է ոչ թե պատժից պայմանական ազատելու, այլ պատժի կատարման հետաձգման հիմք, իսկ 89-րդ հոդվածով նախատեսվող արտակարգ հանգամանքները հանդիսանում են պատժից ազատելու հիմք: Առաջարկում ենք «պատժից պայմանական ազատել» հասկացության լիարժեք բացահայտման նպատակով հղում կատարել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 13-րդ գլխի կարգավորումներին ընդհանրական ձևով՝ շփոթություններից խուսափելու նպատակով:

6. Նախագծի 7-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսվում է՝ *«Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունը՝ մինչդատական վարույթում գտնվող քրեական վարույթներով սույն օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված հարցումներ, այդ թվում՝ հանձնելու մասին հարցումներ ուղարկելու և ստանալու, ստացված հանձնման հարցումների*

վերաբերյալ որոշումներ կայացնելու, վարույթներ ուղարկելու, ստանալու, դրանց ընթացքը լուծելու հարցերով»: Ցանկանում ենք նշել, որ Նախագծի 6-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով բացահայտվում է քրեական վարույթներով իրավական օգնության նշանակությունը՝ իր հերթին հղում կատարելով Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ մասին: Արդյունքում բախվում ենք շարունակական հղման, ինչը արգելվում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետով, այն է՝ *«Արգելվում է կատարել (...) շարունակական հղումներ, երբ նորմը, որին հղում է կատարվում, իր հերթին հղում է կատարում մեկ այլ նորմի»:* Ուստի առաջարկում ենք Նախագծի 7-րդ հոդվածի 1-ին մասում հղում կատարել միայն Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ մասին և հանել «, այդ թվում՝ հանձնելու մասին հարցումներ» արտահայտությունը քանզի Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով հանձնելու մասին հարցումները ևս դիտարկվում են քրեական վարույթներով իրավական օգնության տեսակ և Նախագծի 7-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում հավելյալ հիշատակման անհրաժեշտությունը բացակայում է:

7. Նախագծի 11-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Սույն օրենքով նախատեսված դեպքերից բացի Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի հիման վրա օտարերկրյա պետության իրավասու մարմինների ներկայացրած իրավական օգնության մասին հարցումների կատարումը կարող է մերժվել այդ պայմանագրերով նախատեսված հիմքերով և կարգով»:* Ցանկանում ենք նշել, որ Նախագծով նախատեսվել են միայն հանձման մասին հարցումների մերժման հիմքեր և ոչ իրավական օգնության մասին հարցումների մերժման դեպքեր և Նախագծի 11-րդ հոդվածի 1-ին մասը կարիք ունի լրամշակման:

8. Նախագծի 13-րդ հոդվածի 1-ին մասում առաջարկում ենք հարցման բովանդակությանը ներկայացվող պահանջների շարքում ներառել նաև այն մարմնի անվանումը, որին ուղարկվում է հարցումը, ինչպես նաև՝ հարցման բովանդակությունը:

9. Նախագծի 14-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *«Վկան կամ փորձագետը, անկախ իր քաղաքացիությունից, սույն հոդվածով սահմանված կարգով ծանուցագրերի հիման վրա Հայաստանի Հանրապետության իրավասու կամ դատական մարմիններ ներկայանալիս չի կարող հետապնդվել կամ կալանավորվել կամ ենթարկվել իր անձնական ազատությունը սահմանափակող այլ միջոցի նախքան Հայաստանի Հանրապետության տարածք ժամանելը կատարած ենթադրյալ հանցանքի համար»:* Ցանկանում ենք նշել, որ Նախագծի 14-րդ հոդվածով նախատեսվում է ոչ միայն վկայի և փորձագետի, այլ նաև որպես տուժող, գույքային պատասխանող, նրանց օրինական և լիազոր ներկայացուցիչ հանդես եկող անձանց Հայաստանի Հանրապետություն կանչելը և այս համատեքստում անհասկանալի է և Նախագծի հիմնավորմամբ չի ներկայացվել միայն վկայի և փորձագետի համար նման իրավական երաշխիքի նախատեսումը: Գտնում ենք, որ այս կարգավորումը ունի լրացուցիչ հիմնավորման կարիք:

Միաժամանակ արտահայտում ենք մտավախություն այն մասին, որ որպես վկա հանդես գալու ընթացքում անձի կողմից վարույթային գործողություններին մասնակցելիս կարող են առաջանալ վերջինիս կողմից այն հանցանքին առնչություն ունենալու մասին կասկածներ, որի կապակցությամբ իրականացվում է քրեական վարույթ և առաջարկում ենք նախատեսել լրացուցիչ կարգավորումներ Նախագծի 14-րդ հոդվածով նախատեսվող ընթացակարգով արդեն իսկ Հայաստանի Հանրապետությունում գտնվող անձանց վերաբերյալ համապատասխան օտարերկրյա պետության իրավասու մարմնի հետ լրացուցիչ պայմանավորվածություններ ձեռք բերելու մասին և նրա նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու:

10. Նախագծի 14-րդ հոդվածի 5-րդ մասում առաջարկում ենք «ՀՀ» հապավումը փոխարինել «Հայաստանի Հանրապետության» ձևակերպմամբ՝ ապահովելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը, առ այն՝ *«Արգելվում են նորմատիվ իրավական ակտում կատարել բառերի կամ տերմինների անհարկի կրճատումներ, ինչպես նաև բառերի կամ տերմինների հապավումներ»:*

11. Նախագծի 14-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *«Անձը, անկախ իր քաղաքացիությունից, որը կանչվել է Հայաստանի Հանրապետության իրավասու կամ դատական մարմիններ՝ ցուցմունք տալու համար իր դեմ հարուցված քրեական հետապնդման ժամանակ, չի կարող հետապնդվել կամ կալանավորվել կամ ենթարկվել իր անձնական ազատությունը սահմանափակող որևէ այլ միջոցի նախքան ՀՀ ժամանելը կատարած այն ենթադրյալ հանցանքների համար, որոնք նշված չեն եղել իրավական օգնության հարցման կամ ծանուցագրի մեջ»:*

Ցանկանում ենք նշել, որ սույն կարգավորման նախատեսումը Նախագծի 14-րդ հոդվածում կարող է խնդրահարույց դիտարկվել նախ այն պատճառով պայմանավորված, որ այն անձինք, ում նկատմամբ քրեական հետապնդում է հարուցված, քրեական վարույթներով իրավական օգնության այլ ընթացակարգով են վարույթային գործողություններ կատարելու նպատակով Հայաստանի Հանրապետության տարածք ներկայանում: Բացի այդ Նախագծի 14-րդ հոդվածը կրում է «Որպես վկա, տուժող, գույքային պատասխանող, նրանց օրինական կամ լիազոր ներկայացուցիչ, փորձագետ Հայաստանի Հանրապետություն կանչելը և վարույթային գործողություններ կատարելը» վերնագիրը և այն չի կարող պարունակել կարգավորումներ այն անձանց վերաբերյալ, ում նկատմամբ հարուցված է քրեական հետապնդում, քանզի կառաջանա՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջի խախտում առ այն՝ *«Հողվածների վերնագրերը համապատասխանում են հողվածների բովանդակությանը»:*

12. Նախագծի 17-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն նախատեսում է որպես վկա կամ առերեսման մասնակից հանդես եկող ազատագրվման դատապարտված անձի անձնական ներկայության ապահովման վերաբերյալ կարգավորումներ, սակայն ցանկանում ենք նշել, որ

կարող է առաջանալ ոչ միայն ազատագրկման այլ նաև ազատությունից զրկելու հետ չկապված այլ պատիժ կրող դատապարտյալի անձնական ներկայության ապահովման անհրաժեշտություն և առաջարկում ենք նորմի հիպոթեզը վերաձևակերպել՝ խուսափելով հետագա անորոշություններից:

13. Նախագծի 17-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության **իրավասու դատարանը** սույն օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված մարմնի միջնորդությունը ստանալուց հետո 10-օրյա ժամկետում գրավոր ընթացակարգով որոշում է կայացնում Հայաստանի Հանրապետության համապատասխան քրեակատարողական հիմնարկում որպես վկա կամ առերեսման մասնակից ժամանակավորապես փոխանցված անձին պահելու մասին միջնորդությունը բավարարելու կամ **մերժելու** մասին»: Ցանկանում ենք ուշադրություն հրավիրել այն հանգամանքին, որ դատական ակտերը ունեն օրինական և պատճառաբանված լինելու իմպերատիվ պահանջ և Նախագծով նախատեսված քրեակատարողական հիմնարկում որպես վկա կամ առերեսման մասնակից ժամանակավորապես փոխանցված անձին պահելու մասին միջնորդությունը մերժելու հիմքերի բացակայության պայմաններում կայացված դատական ակտը այդ պահանջներին չի կարող համապատասխանել: Հետևաբար առաջարկում ենք Նախագծի 17-րդ հոդվածը լրամշակել, որոշակիացնելով այն հիմքերը, որոնց առկայությամբ դատարանը իրավասու է մերժել քրեակատարողական հիմնարկում որպես վկա կամ առերեսման մասնակից ժամանակավորապես փոխանցված անձին պահելու մասին միջնորդությունը:

Բացի այդ առաջարկում ենք «որպես վկա կամ առերեսման մասնակից ժամանակավորապես փոխանցված անձ» արտահայտության փոխարեն օգտագործել «որպես վկա կամ առերեսման մասնակից ժամանակավորապես փոխանցված դատապարտված անձ» արտահայտությունը՝ ապահովելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը:

14. Նախագծի 19-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Օտարերկրյա պետության և Հայաստանի Հանրապետության միջև քրեական վարույթներով իրավական օգնություն ցույց տալու մասին միջազգային պայմանագրերի բացակայության դեպքում տվյալ պետության իրավասու մարմինների և պաշտոնատար անձանց (այսուհետ՝ օտարերկրյա պետության իրավասու մարմիններ) և Հայաստանի Հանրապետության դատարանի, դատախազի, քննիչի, հետաքննության մարմնի (...)*»: Ցանկանում ենք նշել, որ Նախագծում մինչ 19-րդ հոդվածը արդեն իսկ օգտագործվել է «օտարերկրյա պետության իրավասու մարմին» արտահայտությունը, մինչդեռ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն նորմատիվ իրավական ակտում հաճախակի կիրառվող երկար արտահայտությունները նույն նորմատիվ իրավական ակտում կարող են սահմանվել կրճատ տարբերակով՝ իրավական ակտում առաջին իսկ կիրառումից հետո նախատեսելով կամ տվյալ արտահայտության սահմանումը, կամ փակագծերում

նշելով կրճատ տարբերակը: Առաջարկում ենք Նախագծի 19-րդ հոդվածի 1-ին մասում պահպանել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջը:

15. Նախագծի 19-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Օտարերկրյա պետության և Հայաստանի Հանրապետության միջև քրեական վարույթներով (...) իրավական օգնություն ցույց տալու մասին միջազգային պայմանագրերի բացակայության դեպքում իրավական օգնություն կարող է ցույց տրվել այն դեպքերում, երբ տվյալ օտարերկրյա պետության և Հայաստանի Հանրապետության միջև իրավական ոլորտում փոխադարձության հիման վրա փոխօգնություն ցույց տալու շուրջ դիվանագիտական ուղիներով ձեռք է բերվել պայմանավորվածություն, որը պետք է նախապես համաձայնեցված լինի՝ 1) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության հետ՝ դատական վարույթում գտնվող քրեական գործերով իրավական օգնություն ցուցաբերելու հարցերով. 2) Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության հետ՝ մինչդատական վարույթում գտնվող քրեական վարույթներով իրավական օգնություն ցուցաբերելու հարցերով:»*:

Ցանկանում ենք նշել, որ սույն ձևակերպման պայմաններում չի նախատեսվել միջազգային պայմանագրերի բացակայության դեպքում փոխադարձության հիման վրա դատավճիռների կատարման վերաբերյալ հարցերով իրավական օգնություն ցուցաբերելու հարցերով իրավասու մարմինը: Ուստի առաջարկում ենք սույն դիտարկման հիման վրա լրամշակել Նախագծի 19-րդ հոդվածը:

16. Նախագծի 21-րդ հոդվածի 1-ին մասում նախատեսում է «հետաքննության մարմին» հասկացությունը, որի բովանդակությունը չի բացահայտվել Նախագծի 6-րդ հոդվածում, մինչդեռ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Նորմատիվ իրավական ակտում կիրառվում են նորմատիվ իրավական ակտերով սահմանված կամ հանրածանոթ հասկացություններ կամ տերմիններ:»*: «Հետաքննության մարմին» հասկացությունը բացահայտվում է 2021 թվականի հունիսի 30-ի Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետում, սակայն վերջինս նույն բովանդակությամբ չի կարող կիրառելի լինել նաև Նախագծում՝ կարգավորող իրավահարաբերությունների և ինստիտուտների տարբերության պատճառով: Ուստի առաջարկում ենք «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի պահանջի պահպանման նպատակով նախագծի 6-րդ հոդվածի 1-ին մասում բացահատել «հետաքննության մարմին» հասկացության բովանդակությունը:

17. Նախագծի 21-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *«Պետական միջոցների հաշվին թարգմանչի ծառայություններից օգտվելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»*: Առաջարկում ենք Նախագծի անցումային դրույթներով սահմանել նաև համապատասխան ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունման նախատեսվող

ժամկետը՝ հետևելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի պահանջին:

18. Չնայած այն հանգամանքին, որ փաստաբան ունենալը ցանկացած անձի իրավունքն է, քրեադատավարական օրենսդրությունը նախատեսում է որոշակի դեպքեր, երբ փաստաբանի ներգրավումը պարտադիր է, քանզի քրեական վարույթին մասնակցող որոշակի պայմանների առկայությամբ ունի իրավական պաշտպանվածության անհրաժեշտություն, որից չի կարող հրաժվել վերջինս: Նույն կոնցեպտուալ մոտեցումը շարունակելով՝ Նախագծի 22-րդ հոդվածի 2-րդ մասում նախատեսվում է՝ *«Սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված մարմինները Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատից պահանջում են փաստաբան նշանակել, եթե՝ 1) հայտնաբերված անձը չի տիրապետում կամ ոչ բավարար չափով է տիրապետում հայերենին. 2) հայտնաբերված անձն անչափահաս է. 3) հայտնաբերված անձը հայտարարում է, որ չունի բավարար միջոցներ փաստաբանի ծառայությունների դիմաց վճարելու համար»*: Միևնույն ժամանակ 2021 թվականի հունիսի 30-ի Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 46-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսում են նաև անձի հոգեկան, մտավոր կամ ֆիզիկական առողջության խնդիր ունենալու, դատարանի որոշմամբ անգործունակ ճանաչված լինելու և այլ համանման հանգամանքները փաստաբանի պարտադիր ներգրավման հիմքեր դիտարկելը, որոնք չեն ներառվել Նախագծի 22-րդ հոդվածի 2-րդ մասում: Կարծում ենք՝ գործող քրեադատավարական պրակտիկայից շեղվող մոտեցման կիրառումը Նախագծի 22-րդ հոդվածի 2-րդ մասում ունի լրացուցիչ հիմնավորման կարիք:

19. Նախագծի 22-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ *«Այն դեպքում, եթե փաստաբանը չի ապահովում հայտնաբերված անձի վերաբերյալ միջնորդությունների կամ բողոքների քննությանը մասնակցությունը, դատարանն իրավունք ունի Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի միջոցով ներգրավել նոր փաստաբան»*: Գտնում ենք, որ Նախագծի 22-րդ հոդվածի 6-րդ մասի ձևակերպումը բավական անորոշ է, քանզի անհասկանալի է, թե արդյոք ցանկացած բացակայություն կարող է դիտարկվել փաստաբանին վարույթից հեռացման հիմք՝ անգամ հարգելի պատճառով, թե նման ընթացակարգ նախատեսվում է միայն այն դեպքերում, երբ նման բացակայությունը առաջացնում է հայտնաբերված անձի իրավական պաշտպանության իրավունքի էության խախտման: Նման պարագայում առաջարկում ենք Նախագծի 22-րդ հոդվածի 6-րդ մասը լրամշակել 2021 թվականի հունիսի 30-ի Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 147-րդ հոդվածի տրամաբանությամբ՝ նախատեսելով որոշակի չափանիշներ՝ փաստաբանի գործունեության գնահատման:

20. Նախագծի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Դատավորը չի կարող իրականացնել միջնորդությունների կամ բողոքների քննությունը, եթե. (...) 2) դատավորը մասնակցել է տվյալ միջնորդության կամ բողոքի քննությանն այլ դատարանում»*: Միևնույն

ժամանակ Նախագծի 26-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսվում է՝ *«Առաջին ատյանի դատարանում միջնորդության կամ բողոքի, վերաքննիչ դատարանում բողոքի քննությանը մասնակցած դատավորը չի կարող մասնակցել իր կողմից կայացված որոշման բողոքարկման քննությանը վերադաս ատյանում»*: Փաստելով, որ առկա է միևնույն մտքի կրկնություն, և Նախագծի 26-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսվող հանգամանքների առկայությամբ դատավորի մասնակցությունը բացառող իրավական հիմքը նախատեսված է Նախագծի 26-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում, առաջարկում ենք Նախագծի 26-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսվող կարգավորումը հանել, քանզի առաջին ատյանի դատարանում կամ վերաքննիչ դատարանում բողոքի քննությանը մասնակցելը դիտարկվում է նույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով այլ դատարանում բողոքի քննությանը մասնակցել:

21. Նախագծի 27-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *«Անչափահաս մասնակցի ծնողը, որդեգրողը չեն կարող մասնակցել վարույթին սույն հոդվածի 3-րդ մասի 2-4-րդ կետերով նախատեսված դեպքերում»*: Վերջինս չի ընդգրկում անձի օրինական ներկայացուցչի համար վարույթին մասնակցությունը բացառող դատավորի, սույն օրենքի 32-րդ հոդվածով նախատեսված իրավասու մարմնի ներկայացուցչի կամ հետաքննության մարմնի աշխատակցի հետ ազգակցական կապի կամ անձնական կախվածության այլ հարաբերությունների մեջ գտնվելու հանգամանք: Կարծում ենք, որ նման տարբերակված մոտեցումը ունի լրացուցիչ հիմնավորման անհրաժեշտություն:

22. Նախագծի 29-րդ հոդվածի 1-ին մասում օգտագործվում է «ենթադրյալ հանցանք կատարած անձ» հասկացությունը մինչդեռ Նախագծի այլ հոդվածներում օգտագործվում է «հանցանք կատարած անձ» հասկացությունը մատնանշելու համար այն նույն անձին, ում վերաբերյալ առկա է հանցանք կատարելու վերաբերյալ հիմնավոր կասկած, վերջինիս հանձնումը պահանջվում է նրա նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու համար և առկա չէ մեղավորությունը հաստատող դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռ: Կարևորելով անմեղության կանխավարկածի կոնվեցիոն սկզբունքը առաջարկում ենք Նախագծում ապահովել միասնական մոտեցում և ելակետ ընդունել «ենթադրյալ հանցանք կատարած անձ» ձևակերպումը, քանզի Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան և դրա հիման վրա ձևավորված նախադեպային պրակտիկան պարտավորեցնում են պետությունների ձեռնպահ մնան անձի հանցանք կատարելու և մեղավորության վերաբերյալ կանխակալ հայտարարություններ և իրավական փաստաթղթերում ձևակերպումներ օգտագործելուց (Տե՛ս *Allenet de Ribemont*, 35-36, *Neštnk v. Slovakia*, 88):

23. Նախագծի 31-րդ հոդվածի համատեքստում ցանականում ենք նշել, որ Օրենսգրքի 480-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսվում է նաև Հայաստանի Հանրապետության տարածքում հանցանք կատարած և օտարերկրյա պետության տարածքում հայտնաբերված անձի հանձման

հարցումը օտարերկրյա պետության իրավասու մարմնի կողմից մերժելու դեպքում կիրառվող ընթացակարգ: Առաջարկում ենք համանման կարգավորումներ նախատեսել նաև Նախագծում՝ խնդրահարույց իրավիճակներից խուսափելու նպատակով:

24. Նախագծի 33-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետում, 34-րդ հոդվածի 5-րդ մասում, 6-րդ մասում, 40-րդ հոդվածի 7-րդ մասում, 81-րդ հոդվածի 4-րդ մասում առաջարկում ենք պահպանել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 16-րդ հոդվածի պահանջը և հրաժարվել «և (կամ)» ձևակերպումը օգտագործելուց:

25. Նախագծի 34-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Հանձնման թույլտվության կամ հանձնումը մերժելու մասին սույն օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասում նշված իրավասու մարմինների որոշումների վերանայման բողոք կարող է բերվել վերաքննիչ դատարան համապատասխան որոշումը ստանալուց հետո՝ 10 օրվա ընթացքում, իսկ Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարան Հայաստանի Հանրապետության վերաքննիչ դատարանի որոշման վերանայման բողոք՝ համապատասխան որոշումը ստանալուց հետո 5 օրվա ընթացքում:»*: Նախագծի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն այդ մարմիններն են՝ Գլխավոր դատախազությունը և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը: Հիշատակված նորմերի համակարգային վերլուծությունը, գտնում ենք, որ կարող է խնդրահարույց դարձնել Նախագծի 34-րդ հոդվածով նախատեսվող կարգավորումները, քանզի դատական վերանայման ինստիտուտը կոչված է երաշխավորելու անձի՝ իր նկատմամբ կայացված դատական ակտերի բողոքարկման և վերադաս դատական ատյանի կողմից դրա վերանայման՝ միջազգային իրավական փաստաթղթերով (Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիային կից 7-րդ արձանագրության 2-րդ հոդված) ամրագրված իրավունքը: «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վերաքննիչ դատարանն օրենքով սահմանված լիազորությունների սահմաններում վերանայում է առաջին ատյանի դատարանների՝ բողոքարկման ենթակա դատական ակտերը:»*:

Մինչդեռ Նախագծի 34-րդ հոդվածով նախատեսվում է դատական վերանայման ենթարկել օրենքի իմաստով «դատարան» չհամարվող մարմինների որոշումները: Սույն տերմինաբանությունը և որոշումների բողոքարկումը վերաքննիչ դատարանի իրավասությանը վերապահելու մոտեցումը որդեգրված է նաև Օրենսգրքի 479-րդ հոդվածի 3-րդ մասով, սակայն ցանկանում ենք նշել, որ Օրենսգրքի 479-րդ հոդվածի համաձայն հանձնման թույլտվության վերաբերյալ որոշում ընդունելու իրավասու մարմին էր նաև գործը քննող դատարանը:

Ելնելով վերոգրյալից առաջարկում ենք Նախագծի 34-րդ հոդվածը լրամշակել և համապատասխանեցնել «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի ինստիտուտների բովանդակությանը:

26. Նախագծի 40-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ *«Եթե անձի ձեռքակալման պահից 72 ժամվա ընթացքում պարզվում են անձի հանձնումը բացառող՝ սույն օրենքի 33-րդ կամ 62-րդ հոդվածներով նախատեսված հիմքերը, ապա սույն օրենքի 32-րդ հոդվածով սահմանված իրավասու մարմնի հանձնարարության հիման վրա հետաքննության մարմինը որոշում է կայացնում վերջինիս արգելանքից անհապաղ ազատելու մասին, բացառությամբ սույն օրենքի 47-րդ հոդվածով նախատեսված դեպքի»*: Ցանկանում ենք նշել, որ սույն կարգավորումը ունի որոշակիության խնդիր, քանի որ միանշանակ չէ՝ Նախագծի 47-րդ հոդվածով նախատեսվող դեպքի ի հայտ գալու պարագայում հետաքննության մարմինը անձին 72 ժամը լրանալու դեպքում պարտավորվում է ազատ արձակել, թե ոչ՝ հաշվի առնելով Սահմանադրության 27-րդ հոդվածի 4-րդ մասի կարգավորումները: Ուստի առաջարկում ենք Նախագծի 40-րդ հոդվածի 9-րդ մասը լրամշակել:

27. Նախագծի 41-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Հայտնաբերված անչափահաս անձի օրինական ներկայացուցչի բացակայության դեպքում՝ նրա իրավունքների իրացումն ապահովում է խնամակալության և հոգաբարձության մարմինը»*: Առաջարկում ենք, տարրնկալումներից խուսափելու նպատակով, Նախագծի 6-րդ հոդվածի 1-ին մասում բացահայտել *«օրինական ներկայացուցիչ»* հասկացությունը:

28. Նախագծի 42-րդ հոդվածի 1-ին մասում առաջարկում ենք ձեռքակալման իրավաչափությունը վիճարկելու իրավունք ունեցող սուբյեկտների շարքից հանել փաստաբանին, քանզի *«Ձեռքակալման իրավաչափությունը ձեռքակալված անձի կամ նրա օրինական ներկայացուցչի կամ փաստաբանի կողմից կարող է վիճարկվել»* ձևակերպումը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 16-րդ հոդվածի համատեքստում, ստեղծում է շփոթ, որ ձեռքակալման իրավաչափությունը վիճարկելու իրավունք ունի նաև փաստաբանը, մինչդեռ վերջինս գործում է ձեռքակալվածի անունից և ի շահ նրան՝ իրականացնելով միայն ներկայուցչաչական գործառույթներ՝ համաձայն «Փաստաբանության մասին» օրենքի 17-րդ հոդվածի: Հետևաբար նրա կողմից ձեռքակալման իրավաչափությունը վիճարկելը դիտարկվում է ձեռքակալված անձի կողմից վիճարկում:

29. Նախագծի 43-րդ հոդվածի 2-րդ մասում ապահովել *«Ինտերպոլ»* բառի կիրառության Նախագծի 40-րդ հոդվածի 4-րդ մասով ամրագրված տարբերակը՝ պահպանելով *«Նորմատիվ իրավական ակտերի մասին»* օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջը:

30. Նախագծի 43-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսվող կարգավորումը, այն է՝ *«Ձեռքակալման՝ սույն օրենքով սահմանված առավելագույն ժամկետը լրանալուց առնվազն 12 ժամ առաջ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դիրքորոշումը, սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված փաստաթղթերը և դրանց հայերեն թարգմանությունը Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազություն և հետաքննության մարմին չներկայացվելու դեպքում՝ ձեռքակալված անձը դատախազի որոշմամբ ազատ է արձակվում»*: Առաջարկում ենք

սույն կարգավորումը լրացնել Նախագծի 40-րդ հոդվածում, քանզի վերջինս առավելապես վերաբերում է անձի ձերբակալման և ձերբակալումից ազատելու կարգին, մինչդեռ Նախագծի 43-րդ հոդվածը կրում է «Նախքան հանձնման մասին օտարերկրյա պետության իրավասու մարմնից հարցումը ստանալն անձին ժամանակավոր կալանավորելը» վերնագիրը, և կարող է առաջանալ հոդվածի բովանդակության և վերնագրի անհամապատասխանության խնդիր:

31. Նախագծի 44-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *«Գատարանը որոշում է կայացնում հանձնման համար կալանավորում կիրառելու միջնորդությունը մերժելու մասին, եթե առկա են հանձնումը մերժելու՝ սույն օրենքի 33-րդ կամ 62-րդ հոդվածով սահմանված հիմքերը, բացառությամբ սույն օրենքի 47-րդ հոդվածով նախատեսված դեպքի»:* Գտնում ենք, որ քննարկվող իրավիճակում Նախագծի 47-րդ հոդվածով նախատեսվող դեպքին բացառության կարգավիճակ տալը իմաստագուրկ է, քանի որ Նախագծի 47-րդ հոդվածը վերաբերում է Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն կատարած Հայաստանի Հանրապետության քաղաքացիների քրեական վարույթը Հայաստանի Հանրապետությանը փոխանցելու նպատակով կալանավորմանը և նման հիմքի առկայության դեպքում դատարանի կողմից ոչ թե բավարարվում է հանձնման համար կալանավորում կիրառելու միջնորդությունը, այլ կայացվում է կալանավորում արդեն 47-րդ հոդվածով սահմանված կարգով:

32. Նախագծի 47-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասերը առաջարկում ենք վերանայել և համապատասխանեցնել միմյանց, քանզի Նախագծի 47-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն հետաքննության մարմնին է պարտավորվում ստուգել անձի Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսանալու հանգամանքը և համապատասխան փաստաթղթերը ներկայացնել Նախագծի 32-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված մարմին, մինչդեռ Նախագծի 47-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն Նախագծի 2-րդ մասով նախատեսված փաստաթղթերը Նախագծի 32-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված մարմնի կողմից են փոխանցվում հետաքննության մարմնին:

33. Նախագծի 47-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *«Ձերբակալման առավելագույն ժամկետը լրանալուց առնվազն 12 ժամ առաջ սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված փաստաթղթերը և դրանց հայերեն թարգմանությունը Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազություն և հետաքննության մարմին չներկայացվելու դեպքում՝ անձն ազատ է արձակվում դատախազի որոշմամբ»:* Առաջարկում ենք, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետի պահանջն ապահովելով, հղում կատարել ոչ թե Նախագծի 47-րդ հոդվածի 4-րդ մասին, այլ 2-րդ մասին, քանզի անհրաժեշտ փաստաթղթերը նախատեսվում են Նախագծի 47-րդ հոդվածի 2-րդ մասում և 4-րդ մասում հղում է կատարում է հենց Նախագծի 47-րդ հոդվածի 2-րդ մասին:

34. Նախագծի 48-րդ հոդվածով նախատեսվում է դատական վերանայման ընթացակարգային կարգավորումներ

- ձեռքարկված իրավաչափությունը վիճարկելու բողոքի արդյունքում կայացված դատական ակտի,

- ժամանակավոր կալանավորում կիրառելու,

- հանձնման նպատակով կալանավորում կիրառելու,

- հանձնման նպատակով կալանավորման ժամկետը երկարաձգելու միջնորդության արդյունքում կայացված դատական ակտերի վերաբերյալ:

Ցանկանում ենք նշել, որ սույն շարքում չի ներառվել փաստացի հանձնման նպատակով կալանավորելու որոշման դատական վերանայման հնարավորությունը, մինչդեռ վերջինս հանդիսանում է համանման իրավական հետևանքներ առաջացնող դատական ակտ: Փաստացի հանձնման նպատակով կալանավորելու որոշման վերանայման հնարավորության սահմանափակումը և չներառելը Նախագծի 48-րդ հոդվածում գտնում ենք, որ ունի լրացուցիչ հիմնավորման կարիք:

35. Նախագծի 48-րդ հոդվածով առաջարկում ենք օգտագործել «վերաքննիչ» և «վճարեկ» ձևակերպումները, ապահովելով հասկացությունների կիրառման միատեսակությունը Նախագծի մյուս հոդվածներում և պահպանել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը:

36. Նախագծի 51-րդ հոդվածի վերանգիրն առաջարկում ենք վերանայել և համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջին, քանզի Նախագծի 51-րդ հոդվածը կարգավորումներ է նախատեսում միայն միջնորդությունների քննարկման վերաբերյալ, մինչդեռ հոդվածը կրում է «Միջնորդությունների և **բողոքների** քննության ընթացքում որոշում կայացնելու կարգը» վերնագիրը:

37. Նախագծի 52-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն դատավարական սանկցիաները նախատեսվում են քննության բնականոն ընթացքը ապահովելու համար այնպիսի գործողությունների կանխման նպատակով, ինչպիսիք են՝

- Իրավունքները չարաչափում,

- Քննությանը մասնակցող անձանց նկատմամբ անհարգալից վերաբերմունք,

- Պարտականությունները չարամտորեն չկատարել,

Միևնույն ժամանակ նույն հոդվածի 2-րդ մասով նախատեսվող սանկցիաներն են միայն

- Նկատողությունը,

- Իրավունքների իրականացման սահմանափակումը:

Կարող ենք փաստել, որ Նախագծի 2-րդ հոդվածով չի նախատեսվել այնպիսի խափանման միջոց, որն ի գործու կլինի վարույթի բնականոն ընթացքն չխոչընդոտելու նպատակով ապահովել

վարույթի մասնակիցների կողմից պարտականությունների պատշաճ կատարումը: Ելնելով վերոգրյալից՝ կարծում ենք, որ Նախագծի 52-րդ հոդվածի 2-րդ մասը ունի լրամշակման կարիք:

38. Նախագծի 52-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«Իրավունքները չարաշահելու դեպքում կարող է կիրառվել միայն սույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված դատավարական սանկցիան»:* Գտնում ենք, ու սույն ձևակերպումը առաջացնում է իրավունքի չարաշահման դեպքում միայն իրավունքի իրականացման սահմանափակման դատավարական սանկցիան կիրառելու հնարավորություն ունենալու պատրանք, որը կարող է դիտարկվել դատարանի դատավարական հայեցողության սահմանափակում: Առաջարկում ենք վերանայել Նախագծի 52-րդ հոդվածի 3-րդ մասը:

39. Նախագծի 55-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսվում է Օտարերկրյա պետության իրավասու մարմինների կողմից հետախուզվող և Հայաստանի Հանրապետության տարածքում ձերբակալված կամ կալանավորված անձանց ազատելու հիմքեր, մինչդեռ նույն հոդվածի 2-րդ մասը, լրացնելով այդ հիմքերը, օգտագործում է «հայտնաբերված անձ» հասկացությունը: Գտնում ենք, որ Նախագծի 55-րդ հոդվածի 2-րդ մասում առկա է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի պահպանման խնդիր և առաջարկում վերանայել այն:

40. Նախագծի 63-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«Օտարերկրյա պետության իրավասու մարմնի կողմից Հայաստանի Հանրապետության իրավասու մարմնին փոխանցված վարույթների հետագա քննությունը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության իրավասու մարմնի կողմից օտարերկրյա պետության իրավասու մարմիններին քրեական հետապնդում իրականացնելու կամ դատական վարույթը շարունակելու նպատակով նախաձեռնված վարույթի փոխանցումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով»:* Ցանկանում ենք նշել, որ 2021 թվականի հունիսի 30-ի Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով նման կարգ նախատեսված չէ: Առաջարկում ենք Նախագծի 63-րդ հոդվածի 3-րդ մասը վերանայել:

41. Նախագծի 67-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն դատապարտյալի փոխանցման դիմումը, ի թիվս այլնի, կարող է քննարկվել, եթե դատապարտյալի փոխանցման վերաբերյալ ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ օտարերկրյա պետության իրավասու մարմնի կողմից մերժումը ստանալուց հետո անցել է մեկ տարի: Գտնում ենք, որ սույն կարգավորումը անհասկանալի է, քանզի անհնար է դարձնում առաջին անգամ նման դիմում ներկայացնելը: Առաջարկում ենք սույն դիտարկումների հիման վրա վերանայել Նախագծի 67-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված պայմանները:

42. Նախագծի 68-րդ հոդվածի 1-ին մասը առաջարկում ենք վերաձևակերպել, քանզի *«Դատապարտյալի փոխանցման մասին դիմումը կարող է ներկայացվել ինչպես դատապարտյալի կամ իր շահերը պաշտպանող փաստաբանի կամ դատապարտյալի մերձավոր ազգականների կամ*

դատապարտյալի օրինական ներկայացուցչի, այնպես էլ դատավճիռը կայացրած օտարերկրյա պետության իրավասու մարմնի կողմից:» Խմբագրությամբ Նախագծի 68-րդ հոդվածի 1-ին մասը դատապարտյալի փոխանցման մասին *դիմում* ներկայացնելու իրավունք է տալիս նաև դատավճիռը կայացրած օտարերկրյա պետության իրավասու մարմնին, մինչդեռ վերջինս կարող է *«հարցում»* ներկայացնել Նախագծի 69-րդ հոդվածով սահմանված կարգով:

43. Նախագծի 70-րդ հոդվածի 1-ին մասում առաջարկում ենք «քաղաքացիություն չունենալու դեպքում» բառակապակցությունը հանել, քանզի առկա է մտքի կրկնություն:

44. Նախագծի 71-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ մասի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության իրավասու մարմնի կողմից դատապարտյալի փոխանցումը մերժվում է, եթե. (...) առկա է հիմնավոր կասկած առ այն, որ դատապարտյալի փոխանցումն իրականացնելուց հետո նրա նկատմամբ Հայաստանի Հանրապետության իրավասու դատարանի դատավճռով նշանակված **պատիժը կարող է էականորեն նվազեցվել** կամ դատապարտյալի փոխանցումից անմիջապես հետո նրան կարող է ներում շնորհվել.»: Սույն կարգավորումը նպատակ է հետապնդում կանխել դատապարտյալի պատժի կրման պայմանները մեղմելու փորձերը: Ուստի, այդ նպատակի առավել լիարժեք իրագործումն ապահովելու նպատակով, առաջարկում ենք վերանայել Նախագծի 71-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը՝ կանխելով ոչ միայն պատժաչափի նվազեցումը, այլ նաև պատիժը ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հնարավորությունը:

45. Նախագծի 73-րդ հոդվածի 2-րդ մասում առաջարկում ենք «, սակայն որևէ պետության քաղաքացիություն ձեռք չի բերել» արտահայտությունը հանել, քանզի առկա է մտքի կրկնություն նույն նախադասությունում:

46. Նախագծի 75-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Դատապարտյալի փոխանցման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության իրավասու մարմնի և օտարերկրյա պետության իրավասու մարմնի միջև համաձայնություն ձեռք բերելուց հետո սույն օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինը միջնորդություն է ներկայացնում Հայաստանի Հանրապետության իրավասու դատարան օտարերկրյա պետության դատարանի դատավճիռը ճանաչելու և կատարելու վերաբերյալ՝ Հայաստանի Հանրապետությունում դատապարտյալի պատժի չկրած մասը կրելու նպատակով*»: Ցանկանում ենք ուշադրություն հրավիրել այն հանգամանքին, որ Նախագծի 66-րդ հոդվածի 2-րդ մասում հղում է կատարվում Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարին և առաջարկում ենք «իրավասու մարմին» ձևակերպման փոխարեն օգտագործել «իրավասու պաշտոնատար անձ» ձևակերպումը՝ հաշվի առնելով Նախագծով նախատեսվող «իրավասու մարմին» հասկացությանը տրված սահմանումը, ինչպես նաև «Պետական կառավարման համակարգի մասին» օրենքի կարգավորումները:

47. Նախագծի 75-րդ հոդվածի 3-րդ մասում առաջարկում ենք պահպանել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի պահանջը, այն է՝ *«Արգելվում է կատարել՝ 1) անորոշ հղումներ (...):»*: Նախագծի 75-րդ հոդվածի 3-րդ մասում «այն» դերանվան օգտագործումը առաջացնում է անորոշություն՝ ինչն է մատնանշում վերջինս՝ Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգիրքը, թե օտարերկրյա պետության իրավասու դատարանի կողմից կայացված դատավճռի ճանաչումը: Ցանկանում ենք նշել, որ վերջին դեպքում կառաջանա Նախագծի 91-րդ հոդվածի 1-ին մասի կրկնության և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի պահպանման խնդիր:

48. Նախագծի 77-րդ հոդվածի վերնագիրն առաջարկում ենք համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջին, քանի որ վերջինս, կրելով «Փոխանցված դատապարտյալին ներում շնորհելը կամ նրա նկատմամբ համաներում կիրառելը» վերնագիրը, չի ներառում և արտահայտում դատավճռի փոփոխման վերաբերյալ Նախագծի 77-րդ հոդվածի կարգավորումները:

49. Նախագծի 77-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *« Սույն հոդվածի 2-րդ և 4-րդ մասերով սահմանված որոշումների մասին Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինը պարտավոր է ծանուցել նաև օտարերկրյա պետության իրավասու մարմինն այն դեպքում, երբ դատավճիռ կայացնող և դատապարտյալի փոխանցումն իրականացրած պետությունը Հայաստանի Հանրապետությունն է:»*: Ցանկանում ենք նշել, որ սույն կարգավորումը, առնչվելով մարդու հիմնարար իրավունքներին և ազատություններին, անհրաժեշտություն է զգում նաև ծանուցման ժամկետի սահմանման:

50. Նախագծի 79-րդ հոդվածով կարգավորվում են դատապարտյալների տարանցիկ փոխադրելու վերաբերյալ հարցումների ներկայացման և դրանց քննարկման կարգը: Օրենսգրքի 479-րդ հոդվածով վերջինս օբյեկտիվորեն սահմանափակված չի եղել միայն դատապարտյալների փոխադրման հնարավորությամբ, քանի որ տարանցիկ փոխադրման անհրաժեշտություն կարող է առաջանալ նաև դատապարտյալի կարգավիճակ չունեցող հանձման ենթակա անձանց տեղափոխելիս: Ուստի առաջարկում ենք Նախագծի 79-րդ հոդվածի 1-ին մասը վերանայել, այն չներառել Նախագծի 7-րդ «ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼՆԵՐԻ ՓՈԽԱՆՑՈՒՄ» գլխում և 1-ին մասում չսահմանափակվել միայն դատապարտյալների տարանցիկ փոխադրման հնարավորությունը նախատեսելով:

51. Նախագծի 79-րդ հոդվածում, կարծում ենք, բացակայում են որոշման ընդունման ընթացակարգային այնպիսի հարցերի վերաբերյալ կարգավորումներ, ինչպիսիք են տարանցիկ փոխադրումը մերժելու հիմքերը և այլ հարցեր, որոնք կարգավորված են Օրենսգրքի 497-րդ հոդվածում և գտնում ենք, ունեն անհրաժեշտություն նախատեսվելու նաև Նախագծի 79-րդ հոդվածում:

52. Նախագծի 81-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսվում են դատապարտյալի փոխանցման վերաբերյալ որոշում կայացնելիս Նախագծի 72-րդ հոդվածի հիմքերից բացի կիրառելի այլ չափանիշներ: Սակայն ցանկանում ենք նշել, որ Նախագծի 81-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 3-րդ մասի չափանիշները նախատեսված են նաև Նախագծի 72-րդ հոդվածի համապատասխանաբար 1-ին մասի 4-րդ և 2-րդ կետերում: Առաջարկում ենք նշվածը հիմք ընդունելով լրամշակել Նախագծի 81-րդ հոդվածը՝ նախատեսելով այնպիսի չափանիշներ, որոնք Նախագծի 72-րդ հոդվածով նախատեսված հիմքերի կողքին կունենան «լրացնող» դերակատարում:

53. Նախագծի 81-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *«Դատապարտյալի փոխանցման վերաբերյալ որոշում կայացնելիս Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինը կարող է մերժել դատապարտյալի փոխանցումը օտարերկրյա պետությանը, եթե վերջինս մինչև դատապարտվելը բնակվել է և (կամ) աշխատել է դատավճիռը կայացրած պետությունում այնքան ժամանակ, որ ինտեգրվել է տվյալ պետության հասարակությանը և դատապարտյալի սոցիալական վերահնտեգրմանը չի նպաստի մեկ այլ պետություն փոխանցվելը՝ անկախ վերջինիս քաղաքացիության երկիր հանդիսանալու փաստից»:* Առաջարկում ենք սույն կարգավորումը ներառել Նախագծի 82-րդ հոդվածում, քանզի վերջինս հանդիսանում է դատապարտյալի փոխանցումը մերժելու հիմք և համապատասխանում է Նախագծի 82-րդ հոդվածի վերնագրին և ընդհանուր բովանդակությանը:

54. Նախագծի 8-րդ գլխի վերնագրում և 83-88-րդ հոդվածներում օգտագործվում են «պատիժը պայմանականորեն չկիրառել» և «պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատվել» հասկացությունները, մինչդեռ այս ինստիտուտները Նախագծի 6-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետում ընդհանրացվել էին «պատժից պայմանական ազատել» հասկացությունում: Գտնում ենք, որ առկա է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 13-րդ գլխով նախատեսվող ինստիտուտների և Նախագծի 8-րդ հոդվածով նախատեսվող կարգավորումների համապատասխանեցման խնդիր և առաջարկում ենք Նախագծի 8-րդ գլխում կիրառվող հակացությունները համապատասխանեցնել Նախագծի 6-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետի սահմանմանը և Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 13-րդ գլխով նախատեսվող իրավական ինստիտուտներին:

55. Նախագծի 87-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Պատիժը պայմանականորեն չկիրառված կամ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատված անձի նկատմամբ Հայաստանի Հանրապետության տարածքում հսկողություն իրականացնելու համար տեղափոխելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության իրավասու մարմնի և օտարերկրյա պետության իրավասու մարմնի միջև համաձայնություն ձեռք բերելուց հետո Հայաստանի Հանրապետության իրավասու մարմնի միջնորդության հիման վրա օտարերկրյա պետության դատարանի որոշումը ենթակա է ճանաչման և կատարման սույն օրենքի 9-րդ գլխի համապատասխան հոդվածներով*

սահմանված կարգով: »: Մինևույն ժամանակ օտարերկրյա պետության դատարանի որոշումը ճանաչման ներկայացնելու ընթացակարգը նախատեսված է նաև նույն հոդվածի 4-րդ մասով՝ անձին Հայաստանի Հանրապետություն տեղափոխելուց հետո: Արդյունքում առաջանում է նույն գործողության անհարկի կրկնություն նախատեսող կարգավորում և առկա է միմյանց համաձայնեցնելու անհրաժեշտություն:

56. Նախագծի 88-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *« Եթե դատական ակտի կատարման ընթացքում անձը խախտում է օտարերկրյա պետության դատարանի ճանաչված դատական ակտով սահմանված պայմանները կամ չարամտորեն խուսափում է հսկողությունից կամ դատարանի կողմից նրա վրա դրված պարտականությունները կատարելուց, ապա նրա նկատմամբ կիրառելի են Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 84-րդ հոդվածի 9-րդ, 10-րդ և 12-րդ կամ 85-րդ հոդվածի 8-րդ և 9-րդ մասերով և «Պրոքուրատուրայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված դրույթները:*»: Ցանկանում ենք նշել, որ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 84-րդ հոդվածի 11-րդ մասով նախատեսվող կարգավորումը նույնպես կարող է դիտարկվել Նախագծի 88-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանգամանքների նկատմամբ կիրառելի:

57. Նախագծի 94-րդ հոդվածի 2-րդ մասում առաջարկում ենք պահպանել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջը, առ այն՝ *«Սահմանադրական օրենք չհանդիսացող օրենսգրքի լրիվ անվանումը հիշատակելիս հետևյալ հաջորդականությամբ ներառվում են օրենքի ընդունման տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը, օրենսգրքի վերնագիրը և «օրենսգիրք» բառը, եթե վերնագիրը չի ներառում այն:*»:

58. Նախագծի 94-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսվում է ուժը կորցրած ճանաչել Օրենսգրքի 54.4-րդ գլուխը, որը նախատեսում էր միջազգային դատարան դիմելու վերաբերյալ կարգավորումներ, ինչը, կարծում ենք, լրացուցիչ հիմնավորման անհրաժեշտություն ունի, քանզի այդ հարաբերությունները կարգավորող նորմեր նախատեսված չեն նաև 2021 թվականի հունիսի 30-ի Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով:

Եզրահանգում

Ամփոփելով փորձաքննության արդյունքները՝ կարող ենք նշել, որ Նախագծով սահմանված կարգավորումներում Սահմանադրության տեսանկյունից խնդրահարույց նորմեր առկա չեն:

Միաժամանակ առաջարկում ենք ներկայացված դիտարկումների հիման վրա ապահովել Նախագծով սահմանված կարգավորումների համապատասխանությունը միմյանց, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի, Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք»

սահմանադրական օրենքի, «Փաստաբանության մասին» օրենքի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի պահանջներին:

ՓՈՐՉԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԻՐԱՎԱԿԱՆ
ՓՈՐՉԱԶՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ

ԶԵՄՖԻՐԱ ՀՈՎԱՍՍԱՓՅԱՆ

Կատարող՝ Գ. Մուրադյան (հեռ.՝ 011-513-248)
19.06.2024թ.

ՏԵՂԵԿԱՆՔ

Նախագծին առնչվող այլ օրենքի կամ Ազգային ժողովի որոշման ընդունման անհրաժեշտության բացակայության մասին

Նախագծին առնչվող այլ օրենքի կամ Ազգային ժողովի որոշման ընդունման անհրաժեշտությունը բացակայում է:

ՓՈՐՉԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԻՐԱՎԱԿԱՆ
ՓՈՐՉԱԶՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ

ԶԵՄՖԻՐԱ ՀՈՎԱՍՍԱՓՅԱՆ

Կատարող՝ Գ. Մուրադյան (հեռ.՝ 011-513-248)
19.06.2024թ.

Ֆինանսատնտեսագիտական փորձաքննության արդյունքները

Ներկայացված նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) առաջարկվում է համապարփակ կարգավորման ենթարկել պետությունների միջև քրեական վարույթներով միջազգային համագործակցությունը: Առանձին կարգավորման առարկա են դարձել հանձնումների, դատապարտյալների փոխանցման, օտարերկրյա պետության կամ Հայաստանի Հանրապետության տարածքում դատապարտված կամ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատված անձանց հսկողություն իրականացնելու համար

տեղափոխելու ընթացակարգերի, ինչպես նաև օտարերկրյա պետությունների և միջազգային դատարանների դատավճիռների ճանաչման (փոխարկման) և դրանց հետեւանքների առնչությամբ իրավական հարաբերությունները: Նախագծի ընդունմամբ ակնկալվում է իրավական օգնության իրականացման նպատակով սահմանել թե՛ ներպետական և թե՛ միջազգային մակարդակում ընդունելի չափանիշներ՝ արդյունքում դրանք սահմանելով իրավական օգնության ոլորտի ներկայացուցիչների գործառույթների պատշաճ իրականացումը և նպաստելով ներկայումս ոլորտը կարգավորող իրավական կարգավորումների բացերի ամբողջական լրացմանը:

Ֆինանսատնտեսագիտական հիմնախնդիրների տեսանկյունից հարկ ենք համարում ներկայացնել մեկ նկատառում՝ կապված Նախագծի 14-րդ հոդվածի հետ: Մասնավորապես, տվյալ հոդվածի 1-ին մասով սահմանվում է, որ. «Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացվող քրեական վարույթով որպես վկա, տուժող, գույքային պատասխանող, նրանց օրինական կամ լիազոր ներկայացուցիչներ, փորձագետ հանդես եկող անձինք, ովքեր գտնվում են Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս, Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերով սահմանված կարգով և պայմաններով կարող են իրավասու մարմնի հարցման հիման վրա կանչվել Հայաստանի Հանրապետություն՝ համապատասխան քրեական վարույթն իրականացնող դատարանի, դատախազի, քննիչի կողմից նրանց մասնակցությամբ անհրաժեշտ վարութային գործողություններ կատարելու համար:»: Այս կապակցությամբ առաջարկում ենք տվյալ օրենքում հստակ սահմանել թե որ դեպքում ում միջոցների հաշվին պետք է իրականացվի նշված անձանց Հայաստանի Հանրապետություն կանչելը: Թեև տվյալ մասում նշվում է, որ Հայաստանի Հանրապետություն կանչելը կատարվում է «միջազգային պայմանագրերով սահմանված կարգով և պայմաններով», այդուհանդերձ, հնարավոր է այդ պայմանագրերով ևս այս հարցը հստակ կարգավորված չլինել՝ հանգեցնելով տարրնթերցումների: Տվյալ օրենքով ՀՀ կանչվելու ֆինանսավորման հարցի կարգավորման օգտին է խոսում նաև այն հանգամանքը, որ եթե նույնիսկ այս օրենքով սահմանված կարգավորումները հակասեն միջազգային պայմանագրերով սահմանվածներին, միևնույն է՝ գործելու են միջազգային պայմանագրերով սահմանված նորմերը, ուստի նաև օրենքով սահմանում որևէ խնդիր չի կարող առաջացնել:

Նույն խնդիրն առկա է նաև Նախագծի 17-րդ հոդվածի 1-ին մասում:

Եզրահանգում

Նախագիծը ֆինանսատնտեսագիտական հիմնահարցերի տեսանկյունից որոշ հստակեցման կարիք ունի:

ՓՈՐՉԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ

ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ

ՓՈՐՉԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ

ԱՐԹՈՒՐ ԹԱՍԱԶՅԱՆ

(հեռ.՝ 011 513-668)

05.06.2024թ.

Սոցիալական փորձաքննության արդյունքները

Նախագծով առաջարկվում է շրջանառության մեջ դնել «Քրեական վարույթներով իրավական օգնության մասին» օրենքի նախագիծը, որի ընդունումը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերով նախատեսված, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի բացակայության դեպքում քրեական վարույթներով իրավական օգնության տրամադրման, օտարերկրյա պետության դատարանի և միջազգային դատարանի կայացրած դատավճռի ճանաչման (փոխարկման կամ կատարման) հարցերը կանոնակարգելու անհրաժեշտությամբ:

Նախագծին կից ներկայացված հիմնավորմամբ՝ քրեական վարույթներով իրավական օգնության ոլորտը ժամանակին համահունչ օրենսդրական կարգավորման կարիք ունի, քանի որ ներկայիս կարգավորումները թերի են, իրարամերժ և գործնականում կիրառելիս առաջացնում են բազմաթիվ խնդիրներ, իսկ առանձին դեպքերում՝ ընդհանրապես կարգավորումներ չեն նախատեսում:

Մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության մեջ բացակայում է «դատապարտյալների փոխանցում» եզրույթը կարգավորող որևէ իրավական ձևակերպում, որն էլ հիմք է հանդիսանում բազմաթիվ անճշտությունների՝ կապված դատապարտյալների փոխանցման ոլորտի հետ, բացակայում են նաև հսկողություն իրականացնելու նպատակով օտարերկրյա պետության կամ Հայաստանի Հանրապետության տարածքում պատիժը պայմանականորեն չկիրառված կամ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատված անձանց տեղափոխմանն առնչվող իրավակարգավորումները (ոլորտը կարգավորող ներպետական օրենսդրության բացակայության, ինչպես նաև միջազգային պայմանագրի բացակայության հետևանքով անհնարին է դառնում հսկողության իրականացման ապահովումը) և այլն:

Հաշվի առնելով վերոգրյալը, Նախագծի հեղինակի կողմից առաջարկվում է՝

- օրենքով սահմանել «դատապարտյալի փոխանցում», «հսկողություն իրականացնել», «դատավճռի ճանաչում», «դատավճռի փոխարկում» և մի շարք հասկացությունների սահմանումները,

- ամրագրել հսկողություն իրականացնելու նպատակով օտարերկրյա պետության կամ Հայաստանի Հանրապետության տարածքում պատիժը պայմանականորեն չկիրառված կամ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատված անձանց տեղափոխելուն վերաբերվող դրույթներ,

- սահմանել քրեական վարույթի փոխանցման կարգը և պայմանները, վարույթի փոխանցման մասին միջնորդության ձևին և բովանդակությանը ներկայացվող պահանջները,

- ամրագրել անչափահասների հանձնմանն առնչվող առանձնահատկությունները՝ հաշվի առնելով անչափահասի լավագույն շահի երաշխավորումը՝ ապրելու, դաստիարակվելու, իրավունքների և շահերի արդյունավետ պաշտպանության, ֆիզիկական, մտավոր, հոգեբանական զարգացման և անձնային առանձնահատկությունները, սոցիալական կապերի հասանելիության հնարավորությունը ապահովելու համար նպաստավոր պայմանների առկայությունը, իսկ հոգեկան խնդիրների առկայության պարագայում՝ մտավոր սահմանափակումների մասին վկայող տվյալների առկայությունը,

- սահմանել դատապարտյալների փոխանցման վերաբերյալ որոշում ընդունելու իրավասություն ունեցող մարմնի լիազորություններին, հաղորդակցության

կարգին, դատապարտյալների փոխանցման պայմաններին, դիմումների ներկայացման պահանջներին, որոշում կայացնելու կարգին, միջազգային պայմանագրի բացակայության պարագայում դատապարտյալի փոխանցման առանձնահատկություններին առնչվող կարգավորումներ և այլն:

Նախագիծը սոցիալ, կրթական, առողջապահական հիմնախնդիրներ չի պարունակում:

Նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չկան:

Եզրահանգում

Նախագիծը սոցիալ, կրթական, առողջապահական հիմնահարցերի տեսանկյունից լրամշակման կարիք չունի:

ՓՈՐՉԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ, ԿՐԹԱԿԱՆ,
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՓՈՐՉԱՔՆՆՈՒԹՅԱՆ
ԲԱԺՆԻ ՊԵՏ՝

ԼԻԼԻԹ ՄԱՐԿՈՍՅԱՆ

Կատարող՝ Ս. Համբարձումյան (հեռ. 011-513-360)

13.06.2024թ.